ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Տավուշի մարզի գ. Այգեձորի համայնքային նշանակության նոր մարզադահլիճի կառուցման նախագծային աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/9 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի օգոստոսի 14-ին կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/9 պայմանագրում 2017 թվականի օգոստոսի 30-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1-	ՀՀ ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N 03/26-1/15484-17 գրությամբ արձանագրված անհամապատասխանությունը պայմանագրի 4.1.1 կետի և հավելված 1-ում նշված ժամկետի միջև:
Փոփոխության նկարագրություն -	Չեղյալ է ճանաչվել պայմանագրի 4.1.1 կետը:
Փոփոխության հիմնավորում-	Պայմանագրի 7.5 կետով նախատեսված պայմանը:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

14.08.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/9 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան «30» օգոստոսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս տնօրեն Լ.Պողոսովայի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով 14.08.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/9 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5-րդ կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիրը) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ չեղյալ ճանաչել Պայմանագրի 4.1.1 կետը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Կողմերի միջև 14.08.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/9 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011012565, ՀՎՀՀ 02565827	<<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ ք.Վանաձոր, Վարդանանց 23/159 <<Ինեկոբանկ>> ՓԲԸ Վանաձորի մ/ճ Հ/Հ 205022201763-1001 ՀՎՀՀ 06938925
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան (ստորագրություն)	_____ Լ. Պողոսովա (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.